

Ծանուցում
Հարգելի բաժանորդ

«Ձապեն Հակորյան» ՍՊԸ
(բաժանորդի անունը)

2883341
(քարտի համարը)

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) տեղեկացնում է, որ Ընկերությանն է ներկայացվել դիմում ք. Երևան Արշակունյաց պողոտա 4 հասցեում Ձեր պայմանագիրը լուծելու պահանջի վերաբերյալ: Դիմումին կից ներկայացվել է տվյալ հասցեի անշարժ գույքի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքը հավաստող իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը:

Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հունվարի 5-ի N 4-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների (այսուհետ՝ ԷԲՑԿ) 139-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթների՝ Ընկերությունը պարտավոր է դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի ԷԲՑ կանոններով պահանջվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները հավաստող փաստաթուղթ՝ նախապես տեղեկացնելով սպառողին, բացառությամբ ԷԲՑ կանոնների 140-րդ կետով նախատեսված դեպքի:

Համաձայն ԷԲՑԿ-ի 140-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթի՝ Սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում 139-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն էլեկտրամատակարարման դադարեցման հարցը լուծվում է վեճը օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելուց հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք մինչև ս.թ մարտի 31-ը Ընկերությանը ներկայացնել ք. Երևան Արշակունյաց պողոտա 4 հասցեի անշարժ գույքի նկատմամբ Ձեր իրավունքների կամ իրավունքների վերաբերյալ կողմերից միջև վեճի առկայությունը հիմնավորող փաստաթղթերը:

Վերը նշված ժամկետում պահանջնվող հիմնավոր փաստաթղթերը չներկայացնելու դեպքում ղեկավարվելով ՀՀ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների 68-րդ կետի 3-րդ ենթակետով և ԷԲՑԿ-ի 139-րդ կետի 2-րդ ենթակետի կարգավորումներով, կողմերիս միջև 16.01.2020թ. կնքված պայմանագիրը 31.03.2022 թվականից կհամարվի լուծված:

**Փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել «ՀԷՑ» ՓԲԸ
ք Երևան, Ա. Արմենակյան 127**

Հարցերի դեպքում զանգահարել 010 59 12 69 հեռախոսահամարով

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԶԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ, ԻՐԱՑՄԱՆ ՏՆՕՐԵՆ**

_____  **Դ.ՂԱԶԻՆՅԱՆ** /

24.03.2022թ.